Հաստատված է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի 2018թ. սեպտեմբերի 26-ի թիվ 1 նիստում
գիտական խորհրդի նախագահ
Ռուբեն Միրզախանյան

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՐԳ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսանողի մասնագիտական կամավորական գործունեության և դրա համար ուսանողին հավելյալ կրթական միավորներ տրամադրելու, ամրագրելու, հաշվառելու և ճանաչելու մասին

1. ***Կարգավորման առարկան***

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում /այսուհետ՝ Համալսարան/ ուսանողի մասնագիտական կամավորական գործունեության մասին սույն կարգով /այսուհետ՝ Կարգ/ սահմանվում են՝

ա/ Համալսարանի ուսանողի կողմից կամավորության հիման վրա իրականացվող մասնագիտական կամավորական գործունեության ընթացքում նրա և շահառուի միջև ծագող, փոփոխվող և դադարող փոխհարաբերությունները Համալսարանում ամրագրելու, հաշվառելու և ճանաչելու պայմանները և կարգը,

բ/ կատարված մասնագիտական կամավորական գործունեության համար ուսանողին Համալսարանի հավելյալ կրթական միավորներ տրամադրելու, ամրագրելու, հաշվառելու և ճանաչելու պայմանները և կարգը,

գ/ ճանաչված մասնագիտական կամավորական գործունեության համար ուսանողին տրամադրված հավելյալ կրթական միավորները Համալսարանում ամփոփիչ ատեստավորման հանրագումարային գնահատականին հավելյալ հատկացնելու պայմանները և կարգը:

2. ***Օգտագործվող հասկացություններ***

Սույն Կարգի իմաստով օգտագործվում են հետևյալ հասկացությունները.

Կամավորության սկզբունք՝ ուսանողի կշռադատված և ազատ կամաարտահայտությունն է անհատույց անձամբ մասնակցելու կրթական չափորոշիչներով որոշված՝ իր մասնագիտությանը կամ մասնագիտացմանը վերաբերելի՝ օրենքով չարգելված մասնագիտական կամավորական գործունեությանը հօգուտ շահառուի:

Կամավորական մասնագիտական գործունեություն՝ ուսանողի կշռադատված և ազատ կամաարտահայտության հիման վրա կրթական չափորոշիչներով որոշված իր

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՐԳ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսանողի մասնագիտական կամավորական գործունեության և դրա համար ուսանողին հավելյալ կրթական միավորներ տրամադրելու, ամրագրելու, հաշվառելու և ճանաչելու մասին

1. *Կարգավորման առարկան*

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում /այսուհետ՝ Համալսարան/ ուսանողի մասնագիտական կամավորական գործունեության մասին սույն կարգով /այսուհետ՝ Կարգ/ սահմանվում են՝

ա/ Համալսարանի ուսանողի կողմից կամավորության հիման վրա իրականացվող մասնագիտական կամավորական գործունեության ընթացքում նրա և շահառուի միջև ծագող, փոփոխվող և դադարող փոխհարաբերությունները Համալսարանում ամրագրելու, հաշվառելու և ճանաչելու պայմանները և կարգը,

բ/ կատարված մասնագիտական կամավորական գործունեության համար ուսանողին Համալսարանի հավելյալ կրթական միավորներ տրամադրելու, ամրագրելու, հաշվառելու և ճանաչելու պայմանները և կարգը,

գ/ ճանաչված մասնագիտական կամավորական գործունեության համար ուսանողին տրամադրված հավելյալ կրթական միավորները Համալսարանում ամփոփիչ ատեստավորման հանրագումարային գնահատականին հավելյալ հատկացնելու պայմանները և կարգը:

2. *Օգտագործվող հասկացություններ*

Սույն Կարգի իմաստով օգտագործվում են հետևյալ հասկացությունները.

Կամավորության սկզբունք՝ ուսանողի կշռադատված և ազատ կամաարտահայտությունն է անհատույց անձամբ մասնակցելու կրթական չափորոշիչներով որոշված՝ իր մասնագիտությանը կամ մասնագիտացմանը վերաբերելի՝ օրենքով չարգելված մասնագիտական կամավորական գործունեությանը հօգուտ շահառուի:

Կամավորական մասնագիտական գործունեություն՝ ուսանողի կշռադատված և ազատ կամաարտահայտության հիման վրա կրթական չափորոշիչներով որոշված իր մասնագիտությանը կամ մասնագիտացմանը վերաբերելի գործունեություն հօգուտ շահառուի, որն իրականացվում է անձամբ՝ անհատույց:

Կամավոր՝ կամավորության սկզբունքով մասնագիտական կամավորական գործունեություն իրականացնող ուսանող:

Ուսանող՝ սույն Կարգի շրջանակներում ուսանող հասկացությունը ներառում է Համալսարանի բակալավրական կրթական համակարգում սովորող 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողներին:

Շահառու՝ կազմակերպություն, որը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իր և ուսանողի փոխադարձ համաձայնությամբ ներգրավում է Համալսարանի կամավորին

մասնագիտական կամավորական գործունեությանը: Համալսարանը կարող է իր աշխատանքներում ներգրավել կամավորների:

3. *Սկզբունքները և ընդհանուր դրույթները*

3.1. Ուսանողի մասնագիտական կամավորական գործունեության սկզբունքներն են կամավորությունը, թափանցիկությունը, հաշվետվողականությունը:

3.2. Համալսարանը պատասխանատվություն չի կրում Ծահառուի առջև կամավորի ստանձնած պարտավորությունների համար:

3.2.1. Եթե Համալսարանի և կամավորի միջև կնքվել է մասնագիտական կամավորական գործունեության պայմանագիր, ապա հարաբերությունները կարգավորվում են պայմանագրի դրույթներին համապատասխան:

3.3. Համալսարանը իրավունք ունի վերահսկելու ուսանողի մասնագիտական կամավորական գործունեության գործընթացը, առանց միջամտելու Ծահառուի աշխատանքներին: Սույն իրավասությունը պայմանավորված է սույն Կարգի համաձայն Համալսարանի կողմից կամավորին համապատասխան հավելյալ կրթական միավորներ տրամադրելու պարտավորությամբ:

3.4. Սույն Կարգով նախատեսված՝ մասնագիտական կամավորական գործունեության մասին նախնական ծանուցում չկատարելու կամ սույն Կարգի պահանջների խախտմամբ արդյունքների մասին չծանուցելու, կամ ֆակուլտետի խորհրդի կողմից մասնագիտական կամավորական գործունեությունը որպես այդպիսին չհաստատվելու դեպքում (կետեր 4 և 5) ուսանողին հավելյալ կրթական միավորներ չեն տրամադրվում:

3.4.1. Սույն կարգի 3.4. կետում նշված՝ նախնական ծանուցմանը վերաբերող սահմանապակումը չի տարածվում 5.5.1. կետով կարգավորվող՝ արտակարգ իրավիճակներում կամավորների կատարած մասնագիտական կամավորական գործունեության վրա և այդ դեպքում նախնական ծանուցում չի պահանջվում:

3.5. Սույն Կարգի պահանջների պահպանմամբ կատարված մասնագիտական կամավորական գործունեության համար ուսանողին Համալսարանի հավելյալ կրթական միավորներ տրամադրելու, ամրագրելու, հաշվառելու և ճանաչելու մասին տեղեկությունները ներառվում են Համալսարանի @aspu.am-ի Google Drive-ի համապատասխան Google Sheet էլեկտրոնային հարթակում:

3.6. Սույն Կարգի 3.5. կետում նշված՝ ուսանողին Համալսարանի հավելյալ կրթական միավորներ տրամադրելու մասին տվյալը որպես հավելյալ կրթական միավոր ներառվում է ամփոփիչ ատեստավորման էլեկտրոնային հարթակում:

3.7. Մասնագիտական կամավորական գործունեությունը չի կարող փոխարինվել ուսումնական պրակտիկայով կամ հաշվառվել որպես ուսումնական պրակտիկա, իսկ ուսումնական պրակտիկան չի կարող փոխարինվել մասնագիտական կամավորական գործունեությամբ կամ հաշվառվել որպես մասնագիտական կամավորական գործունեություն:

4. *Մասնագիտական կամավորական գործունեությունը ամրագրելու, հաշվառելու և ճանաչելու պայմանները և կարգը*

4.1. Մասնագիտական կամավորական գործունեությունը ենթակա է ամրագրման հաշվառման և ճանաչման Համալսարանում:

4.2. Մասնագիտական կամավորական գործունեությանը մասնակցելու կամ ուսանողին ներգրավելու նախաձեռնությունը կարող է պատկանել կամավորին կամ կամավորի համաձայնությամբ՝ Ծահառուին կամ Համալսարանին:

4.3. Համալսարանի ուսանողի մասնագիտական կամավորական գործունեության ճանաչման, ուսանողին հավելյալ կրթական միավորներ տրամադրելու և այդ միավորները ամփոփիչ ատեստավորման հանրագումարային գնահատականին հավելյալ ավելացնելու համար պահանջվում է, որ ուսանողը սահմանված կարգով և ժամկետներում գրավոր նախնական ծանուցմամբ իրազեկի Համալսարանին որպես կամավոր ներգրավվելու մասին: Ուսանողի փոխարեն գրավոր նախնական ծանուցմամբ իրազեկումը կարող է կատարել Շահառուն:

4.4. Գրավոր նախնական ծանուցմամբ իրազեկումը, որպես կանոն, կատարվում է մասնագիտական կամավորական գործունեության ներգրավելուց առաջ: Առանձին դեպքերում, ելնելով մասնագիտական կամավորական գործունեության բնույթից, կատարման վայրից կամ այլ առանձնահատկություններից ուսանողին /Շահառուին/ թուլատրվում է նախնական իրազեկումը կատարել որպես կամավոր ներգրավվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4.4.1. Նախնական ծանուցման մեջ նշվում են՝

1) կամավորի անունը, ազգանունը, նրա ցանկությամբ՝ նաև հայրանունը,

2) շահառու կազմակերպության անվանումը,

3) շահառու կազմակերպության համաձայնությունը ուսանողին որպես կամավոր ներգրավելու մասին,

4) իրականացման ենթակա մասնագիտական կամավորական գործունեության համառոտ նկարագիրը,

5) մասնագիտական կամավորական գործունեության նախատեսվող ժամկետը /սկիզբը, ավարտը, մոտավոր ժամաքանակը/,

6) ուսանողի կամ շահառուի նախաձեռնությամբ ծանուցման մեջ կարող են ներառվել այլ պայմաններ կամ տեղեկություններ:

4.4.2. Նախնական ծանուցման նմուշ-օրինակը կցվում է որպես Հավելված 1:

4.5. Համալսարանի 2-րդ կուրսերի ուսանողների դեպքում նախնական ծանուցման վրա 3 աշխատանքային օրվա ընթացքում կատարվում է Համալսարանի համապատասխան ֆակուլտետի դեկանի, իսկ 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողների դեպքում՝ դեկանի և ամբիոնի վարիչի մակագրությունը՝ կատարման ենթակա գործունեությունը որպես մասնագիտական կամավորական գործունեություն հետագայում ճանաչելու կամ չճանաչելու մասին:

4.6. Համապատասխան մակագրությամբ ուսանողի կամ շահառուի նախնական ծանուցումը հաշվառվում է Համալսարանի տվյալ ֆակուլտետի ուսանողի մասնագիտական կամավորական գործունեության մասին Համալսարանի @aspu.am-ի Google Drive-ի համապատասխան Google Sheet էլեկտրոնային մատյանում, որը վարում է դեկանատը: Էլեկտրոնային մատյանի ձևը կցվում է որպես Հավելված թիվ 2: Էլեկտրոնային մատյանում ամրագրված ուսանողի @aspu.am պաշտոնական էջին տրամադրվում է թույլտվություն տեսնելու մատյանում գրանցված տվյալները:

4.7. Մակագրությունը ուսանողի կողմից կարող է 3 աշխատանքային օրվա ընթացքում բողոքարկվել Համալսարանի ռեկտորին և ենթակա է քննարկման ռեկտորի որոշված անձի կողմից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

5. *Կատարված մասնագիտական կամավորական գործունեության համար ուսանողին Համալսարանի հավելյալ կրթական միավորներ տրամադրելու, ամրագրելու, հաշվառելու և ճանաչելու պայմանները և կարգը*

5.1. Կատարված մասնագիտական կամավորական գործունեության համար ուսանողին Համալսարանի հավելյալ կրթական միավորներ տրամադրելու, ամրագրելու, հաշվառելու և ճանաչելու համար պահանջվում է, որ Շահառուն գրավոր ծանուցմամբ Համալսարանին իրազեկի ուսանողի կատարած մասնագիտական կամավորական գործունեության արդյունքների մասին (այսուհետ՝ արդյունքների մասին ծանուցում):

5.2. Արդյունքների մասին ծանուցումը Համալսարանին ներկայացվում է մասնագիտական կամավորական գործունեության արդյունքներով՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում: Առանձին դեպքերում, ելնելով մասնագիտական կամավորական գործունեության բնույթից, կատարման վայրից կամ այլ առանձնահատկություններից արդյունքների մասին ծանուցումը Համալսարանին կարող է կատարվել 10 օրացուցային օրը չգերազանցող ժամկետում:

5.3. Արդյունքների մասին ծանուցման մեջ նշվում են՝

1) ծանուցող կազմակերպության անվանումը,

2) կամավորի անունը, ազգանունը, նրա ցանկությամբ՝ նաև հայրանունը,

3) մասնագիտական կամավորական գործունեության ժամկետը /սկիզբը, ավարտը, ժամաքանակը/,

4) իրականացված մասնագիտական կամավորական գործունեության համառոտ նկարագիրը,

5) շահառուի նախաձեռնությամբ ծանուցման մեջ կարող են ներառվել այլ տեղեկություններ:

5.4. Շահառուի՝ արդյունքների մասին ծանուցման նմուշ-օրինակը կցվում է որպես Հավելված 3:

5.5. *Յուրաքանչյուր մեկ ժամի համար հաշվարկվում է հավելյալ 0,025 կրթական միավոր:*

Հավելյալ կրթական միավորների հանրագումարը չի կարող գերազանցել 5 միավորը:

Եթե հաշվարկված հավելյալ կրթական միավորների հանրագումարը գերազանցում է 5 միավորը, ապա առավելագույն 5 միավորը գերազանցող կրթական միավորները հաշվի չեն առնվում:

Եթե, օրինակ, կատարված մասնագիտական կամավոր գործունեության համար ճանաչվել է 320 ժամ, ապա 0,025 միավորը բազմապատկվում է 320 ժամի, որը հավասար է 8 միավորի, սակայն ուսանողին տրամադրվում է ոչ թե 8, այլ Համալսարանի հավելյալ կրթական առավելագույն 5 միավորը:

5.5.1. Արտակարգ իրավիճակներում կամավորների կատարած մասնագիտական կամավորական գործունեության մեկ ժամը հաշվարկվում է եռակի, սակայն տրամադրվող հավելյալ միավորը չի կարող գերազանցել 10-ը:

Եթե, օրինակ, արտակարգ իրավիճակներում կատարված մասնագիտական կամավորական գործունեության համար ճանաչվել է 10 ժամ, ապա ուսանողին տրամադրվում և ճանաչվում է Համալսարանի հավելյալ 0,75 կրթական միավոր (0,025x3x10=0,75):

5.6. Ծանուցումը ստանալուց հետո 2-րդ կուրսերի ուսանողների դեպքում 3 օրվա ընթացքում ծանուցման վրա կատարվում է Համալսարանի համապատասխան ֆակուլտետի դեկանի, իսկ 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողների դեպքում՝ նույն ժամկետում դեկանի և ամբիոնի վարիչի մակագրությունը՝

ա/ իրականացված գործունեությունը որպես մասնագիտական կամավորական գործունեություն ճանաչելու կամ չճանաչելու մասին,

բ/ յուրաքանչյուր մեկ ժամի համար 0,025 կրթական միավոր հաշվակով կամ 5.5.1. կետում նշված հաշվարկով հաշվարկված միավորների ընդհանուր թիվը,

գ/ հաշվարկված կրթական միավորները ուսանողի ամփոփիչ ատեստավորման հանրագումարային գնահատականին որպես հավելյալ միավորներ հատկացնելու մասին:

5.7. Համապատասխան մակագրությամբ Շահառուի ծանուցումը հաշվառվում է Համալսարանի տվյալ ֆակուլտետի ուսանողի մասնագիտական կամավորական գործունեության մասին մատյանում:

Դեկանի և/կամ ամբիոնի վարիչի մակագրությունը ուսանողի կողմից կարող է 3 աշխատանքային օրվա ընթացքում բողոքարկվել Համալսարանի ռեկտորին և ենթակա է քննարկման ռեկտորի որոշված անձի կողմից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

5.8. Ուսանողի մասնագիտական կամավորական գործունեության մասին մատյանում ներառված վերջնական տվյալները ենթակա են քննարկման ֆակուլտետի խորհրդում: Այդ գործունեությունը Ֆակուլտետի խորհրդի որոշմամբ որպես մասնագիտական կամավորական գործունեություն ճանաչվելու դեպքում ենթակա են ներառման սույն կարգի 3.5. կետով նախատեսված Համալսարանի @aspu.am-ի Google Drive-ի համապատասխան Google Sheet էլեկտրոնային հարթակում:

5.9. Սույն կարգով նախատեսված փաստաթղթերը ենթակա են պահպանման դեկանատի պաշտոնական @aspu.am էլեկտրոնային էջի Google Drive-ում, ինչպես նաև ուսանողի անձնական գործում:

6. *Ուսանողին տրամադրված կրթական միավորները Համալսարանում Ուսանողի ամփոփիչ ատեստավորման հանրագումարային գնահատականին հավելյալ հատկացնելու պայմանները և կարգը*

6.1. *Սույն Կարգի 5-րդ կետով սահմանված կարգով ուսանողին տրամադրված, ամրագրված, հաշվառված և ճանաչված հավելյալ կրթական միավորների հանրագումարը դեկանի զեկուցագրի հիման վրա ռեկտորի համաձայնությամբ ներառվում է ամփոփիչ ատեստավորման մատյանի ուսանողի հատվածում և գումարվում է ուսանողի ամփոփիչ ատեստավորման հանրագումարային գնահատականին որպես հավելյալ միավոր: Այդ դեպքում ուսանողի ամփոփիչ ատեստավորման հանրագումարային գնահատականը չի կարող գերազանցել 100 միավորը և գերազանցող մասը հաշվի չի առնվում:*

Եթե, օրինակ, թեզի պաշտանության և պրակտիկայի հանրագումարային միավորը կազմում է 84 միավոր, որին գումարվում է կատարված կամավորական գործունեության համար ուսանողին տրամադրված և ճանաչված Համալսարանի կրթական հավելյալ 3 միավոր, ապա հանրագումարը կազմում է 87 միավոր:

Եթե, օրինակ, ավարտական աշխատանքի պաշտանության և պրակտիկայի հանրագումարային միավորը կազմում է 97 միավոր, որին գումարվում է կատարված կամավորական գործունեության համար ուսանողին տրամադրված և ճանաչված Համալսարանի կրթական հավելյալ 4,4 միավոր, ապա հանրագումարը կազմում է 100 միավոր, իսկ հավելյալ 1,4 միավորը հաշվի չի առնվում:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն Կարգը ուժի մեջ է մտնում Համալսարանի գիտական խորհրդի կողմից ընդունելու օրից:

7.2. Սույն կարգի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Համալսարանի ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտորին:

Հավելված 1.

Տարբերակ Ա – ուսանողի կողմից նախնական իրազեկում

Խաչատուր Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանի
..... Ֆակուլտետի դեկան
.....
Համալսարանի ..... Ֆակուլտետի ..... մասնագիտության
..... կուրսի ուսանող ....-ից

Հարգելի .....

Համալսարանում ուսանողի մասնագիտական կամավորական գործունեության մասին ժամանակավոր կարգի 4-րդ կետի համաձայն տեղեկացնում եմ, որ իմ և ..... կազմակերպության միջև ձեռք է բերվել համաձայնություն այն մասին, որ ես ս.թ. .....-ի ..-ից մինչև .....-ի ..-ը կազմակերպությունում իրականացնեմ հետևյալ մասնագիտական կամավորական գործունեությունը՝
.....
.....
..... :

Նախատեսվում է, որ այդ գործունեությունը պետք է իրականացվի ընդհանուր առմամբ ..... ժամում:

Խնդրում եմ կատարման ենթակա մասնագիական կամավորական գործունեությունը սահմանված կարգով ճանաչել որպես այդպիսին:

Համալսարանի .....
Ֆակուլտետի ..... կուրսի ուսանող **..... .....**

<<..>> .....- 20.. թ.

Տարբերակ Բ – Շահառուի կողմից նախնական իրազեկում

Խաչատուր Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանի
..... Ֆակուլտետի դեկան
.....

Հարգելի .....

..... Կազմակերպության և համալսարանի ..... Ֆակուլտետի ... կուրսի ուսանող ..... միջև ձեռք է բերվել համաձայնություն այն մասին, որ ուսանողը ս.թ. .....-ի ...-ից մինչև .....-ի ..-ը կազմակերպությունում իրականացնի հետևյալ մասնագիտական կամավորական գործունեությունը՝.....
.....
.....
.....:

Նախատեսվում է, որ այդ գործունեությունը պետք է իրականացվի ընդհանուր առմամբ ..... ժամում:

Առաջարկում եմ կատարման ենթակա մասնագիական կամավորական գործունեությունը սահմանված կարգով ճանաչել որպես այդպիսին:

..... Կազմակերպության ղեկավար **... .....**
<<..>> .....- 20.. թ.

Հավելված 3

Շահառուի կողմից արդյունքների իրազեկում

Խաչատուր Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանի
..... Ֆակուլտետի դեկան
.....

Հարգելի .....

Համալսարանի ..... Ֆակուլտետի ... կուրսի ուսանող ..... ա.թ. .....-ի ...-ից մինչև .....-ի ..-ը ..... կազմակերպությունում իրականացրել է հետևյալ մասնագիտական կամավորական գործունեությունը՝
.....
.....
.....
.....:

Այդ գործունեությունը իրականացվել է ընդհանուր առմամբ ..... ժամում:

Կազմակերպության ղեկավար ... .
<<..>> .....- 20.. թ.